AlmaLaurea Conference
"Entrepreneurship, innovation and growth: the graduates' role"

Speech of Mr. Tokmajyan, Rector of YSUAC

Round Table

March 10th, 2014

(According to requirements the Speech is intended for 10 min)

Prepared by V. Hovhannisyan, PhD

Dear Colleagues,
Dear Ladies and Gentlemen,

The first of all I would like to use this opportunity to thank the organizers of this conference for the invitation and for the warm hospitality and I would like to welcome to all participants of the conference.

Education has always been an extremely important factor and one of the main means of a cultural and political survival for Armenians, one of the most ancient nations in the world. New, sometimes very harsh realities have a dramatic impact on every aspect of the Armenian nation's life. One of vulnerable spheres is labor market and problems related to employment. Obviously, that the role of graduates of higher education institutions is indispensable for the entrepreneurship, innovation and for the further development of the countries. But, unfortunately, today we have a reality, when university graduates are facing difficulties in finding a job in the profession and qualification obtained in the universities. This situation is true not only for Armenia but also for many other countries, including European countries.

The collapse of the Soviet Union, a painful and shocking processes of transition from the centrally-planned to the free-market life, multifold cuts of state financing due to the economic crisis, the poverty of the population and stratification, dramatic drop in the labor market demand were among the reasons for the need of reforms, especially in the system of education in the Republic of Armenia.

Not only Armenia needs and implements education reforms. The whole educated world is trying to keep updated their education systems and to meet requirements of rapidly changing labor markets. One of the most vivid examples is Europe. In the last few years, the European process of education reforms has become a tangible reality for the European Countries and their citizens. The Europe of Knowledge is acknowledged as a very influential factor for human, social and economic development of society.

The Republic of Armenia by joining the Council of Europe and the Bologna Process has stated its commitment to the European Processes and its willingness to conduct all necessary reforms to become a qualified member state. For this purpose, "on May 19, 2005 the Republic of Armenia (RA) Minister of Education and Science signed the Bergen Communiqué of the Ministers of Education from the Bologna participating countries; thus Armenia officially joined the Bologna process committing itself to completing the implementation of main principles of the Bologna process by its specific action lines by 2010 and becoming part of the emerging European Higher Education Area (EHEA)."

The legal conditions for implementing the principles of the Bologna Process have been established by Law on Education (1999), Law on State program for educational development for the period of 2001-2005 (adopted by the National Assembly in 2001), Strategy of Higher Education (approved by

Government in 2002), Law on Higher and Postgraduate Professional Education (adopted by the National Assembly on December 14, 2004) and other legal documents.

In order to meet the requirements of constantly changing modern-days labor market and to become a fully accepted member of the world educated community, Armenia actively conducts educational reforms.

Yerevan State University of Architecture and Construction (YSUAC) also initiates a series of measures aimed at ensuring the employment of graduates. The University created its career center, which is trying to be useful for the university's graduates to help them to find their working place in the job market. The range of employment issues is quite wide and complicated. The solutions of those issues, in many cases, we can find not only in the educational field but also in the economic and/or in the social fields. Besides, current information base do not allow the systematic monitoring of the training system, of the labor market, and to the link between them, to forecast skills requirements of the labor market and training needs.

Nowadays, for transition countries, there is another very important tool for the implementation of reforms in the HEIs. I am talking about EU funded Tempus projects. In the last call 18 projects were selected for the further implementation in Armenia. Today YSUAC is involved in the 6 Tempus projects. Let me, in brief, to talk about two of them without decreasing the roles of rest.

The first one about which I want to talk is "*The **Higher Education Network for Human Capital Assessment and Graduate Employability in Armenia"*** **project or** HEN-GEAR project. The project aims at uphold the higher education reforms and modernization process in place in Eastern Neighboring Area, by **addressing quality assessment** and **support of graduates' employability in Armenia**. The duration of this project is 3 years. It started in 2013 and will last till end of 2015. As a Coordinator Italian AlmaLaurea interuniversity consortium has very big role in the implementation of this project and with whom we are collaborating in efficient way.

The HEN-GEAR project is a National project. Thus, the project will support Armenian Universities in identifying instruments and methodologies to improve the effectiveness of the education system through the implementation, at local level, of the **Armenian graduates database,** that, following the Almalaurea model in Italy, pursue two main goals:

- ***provide an efficient tool to the Universities and the Government for the monitoring of long lasting impact of HE on society and for the improving educational supply accordingly*;**
- ***supporting employability and networking between education system and the business sector.***

There are 17 partner universities and organizations involved in the project. Particularly they are: *Ministry of Education and Science of the RA; Ministry of Labour and Social Issues of the RA; Armenian National Students Association; Armenian National Center For Professional Education and Quality Assurance; Union of Manufacturers and Businessmen of Armenia; Yerevan State University; State Engineering University of Armenia; Yerevan State University of Architecture and Construction; Armenian State Agrarian University; Armenian State University of Economics; Yerevan State Academy of Fine Arts; Gavar State University; Gyumri State Pedagogic University; University of Minho (Portugal); University of Huelva (Spain); University Las Palmas of Gran Canaria (Spain).*

In frame of the project the data-base system will be created, which will allow enterprises to search for graduates to employ according to specific skill needs while allowing graduates **comprehensive and democratic** access to labour market.

Last year in December 2, representatives of the HEN-GEAR partner institutions met in Yerevan at Armenian State University of Economics to participate in a twofold event: in the morning to the Institutional Meeting on human capital assessment and graduates' employability in Armenia; in the afternoon to the meeting of the Steering Committee of the HEN-GEAR project. The project activities and progress for one year were also assessed during the meeting. I will say that the progress of the project was assessed quite positive.

The second Tempus project about what I want to briefly talk is the ARMENQA Project (Implementation of National and Sectorial Qualifications Frameworks in Armenia). This project is also national project. The Kick-off Meeting of the project was at Linkoping University, Sweden on February 3-4, 2014. 17 partners are involved in the project. The project aims to enhance the employability of Armenian HEIs' graduates and facilitate the recognition of Armenian qualifications in the labour market nationally and internationally.

In conclusion I would say that it is not a secret that the future of any country depends on a level and quality of their future specialists. That is why the education reforms should be on a constant basis for all countries, to become a fully accepted member of the world community. So, let me finalize my speech with the conviction, that the further deepening and widening of our collaboration will bring the expected progress for all of us.

Thank you for your consideration.

ԱլմաԼաուրեայի գիտաժողով
“Ձեռնարկատիրություն, նորարարություն և զարգացում. շրջանավարտների դերը”
ԵՃՇՊՀ-ի ռեկտոր պարոն Թոքմաջյանի ելույթը
Կլոր սեղան
10 մարտի, 2014թ.
(Համաձայն պահանջների ելույթի տևողությունը՝ 10 րոպե)

Մշակող՝ Վ.Հովհաննիսյան, տ.գ.թ.

Հարգելի գործընկերներ,
Տիկնայք և պարոնայք,

Օգտվելով առիթից՝ նախ ուզում եմ շնորհակալություն հայտնել գիտաժողովի կազմակերպիչներին հրավերի և ջերմ հյուրընկալության համար և ողջունել գիտաժողովի բոլոր մասնակիցներին:

Կրթությունը հայերի՝ աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկի, համար միշտ էլ եղել է չափազանց կարևոր գործոն և միևնույն ժամանակ հաղիսացել ու հանդիսանում է նրա մշակութային և քաղաքական գոյատևման հիմնական միջոցներից մեկը: Նոր, երբեմն խիստ բացասական իրողությունները դրամատիկ ազդեցություն են ունենում հայ ժողովրդի կյանքի ամեն ոլորտի վրա: Նման խոցելի ոլորտների մեկն էլ աշխատաշուկան է և այն խնդիրները, որոնք կապված են զբաղվածության հետ:

Ակնհայտ է, որ բարձրագույն կրթության հաստատությունների շրջանավարտների դերը երկրում ձեռնարկատիրության, նորարարության և երկրների հետագա զարգացման գործընթացներում անփոխարինելի է: Սակայն, ցավոք, այսօրվա իրականությունն այն է, որ շրջանավարտի առջև ծառանում են դժվարություններ՝ բուհում ձեռք բերված որակավորմանը և մասնագիտությանը համապատասխան աշխատանք գտնելու առումով: Նման իրավիճակը բնորոշ է ոչ միայն Հայաստանի, այլև բազմաթիվ այլ, այդ թվում Եվրոպական երկրների համար:

ԽՍՀՄ փլուզումը, պլանային տնտեսությունից դեպի բաց շուկայական տնտեսությանը ցավալի ու ցնցող գործընթացներով անցումը, տնտեսական ճգնաժամի հետ կապված պետական ֆինանսավորման բազմակի անգամներով կրճատումը, բնակչության աղքատությունը և շերտավորումը, աշխատաշուկայում պահանջարկի դրամատիկ անկումը այն հիմնական պատճառներն էին, որոնք բարեփոխումների իրականացման անհրաժեշտություն առաջացրեցին և. հատկապես, Հայաստանի կրթական համակարգի ոլորտում:

Ոչ միայն Հայաստանն է կրթական բարեփոխումների կարիք զգում և իրականացնում դրանք, այլ ամբողջ աշխարհն է փորձում իր կրթական համակարգը պահել միշտ թարմացված և աշխատաշուկայի արագ փոփոխվող պահանջներին համապատասխան վիճակում: Վառ օրինակներից է Եվրոպան: Վերջին մի քանի տարիներում կրթական բարեփոխումների եվրոպական գործընթացը շոշափելի իրականություն է դարձել եվրոպական երկրների և նրա քաղաքացիների համար: Գիտելիքների Եվրոպան համարվում է հասարակության մարդկային, սոցիալական և տնտեսական զարգացման համար շատ ազդեցիկ գործոն:

Հայաստանը, անդամակցելով Եվրոպական Խորհրդին և միանալով Բոլոնիան գործընթացին, հայտարարել է եվրոպական գործընթացներին իր հավատարմության և բոլոր անհրաժեշտ բարեփոխումներն իրականացնելու պատրաստակամության մասին: Այդ նպատակով 2005թ. մայիսի 19-ին ՀՀ Կրթության և գիտության նախարարը ստորագրեց Բոլոնիան գործընթացի անդամ երկրների կրթության նախարարների Բերգենի Կոմյունիկեն, այդպիսով Հայաստանը պաշտոնապես միացավ Բոլոնիայի գործընթացին՝ պարտավորվելով մինչև 2010 թ. ավարտել Բոլոնիայի գործընթացի հիմնական սկզբունքների իրականացումը և դառնալ նորովի ձևավորվող Եվրոպական Բարձրագույն Կրթական Տարածքի (ԵԲԿՏ) մի մասը:

Բոլոնիայի գործընթացի սկզբունքների իրականացման համար իրավական հիմքերը ստեղծվեցին Կրթության մասին (1999) և 2001-2005 թ.թ. համար կրթության զարգացման պետական ծրագրի մասին (2001) օրենքների ընդունմամբ, Բարձրագույն կրթության ռազմավարության մասին Կառավարության ընդունած որոշմամբ (2002), Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին (2004) օրենքի և այլ իրավական ու օրենսդրական ակտերի ընդունմամբ:

Ներկայումս աշխատաշուկայի անընդհատ փոփոխվող պահանջներին համապատասխանելու և համաշխարհային կրթական հանրության լիիրավ անդամ դառնալու համար Հայաստանն ակտիվորեն իրականացնում է կրթական ոլորտի բարեփոխումներ: Հայաստանի Հանրապետության կրթական համակարգում փորձ է արվում իրականացնել մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված են շրջանավարտների հնարավորությունների ընդլայնմանը՝ աշխատանքային շուկայում իրենց տեղը գտնելու առումով:

Երևանի Ճարտարապետության և շինարարության պետական համալսարանը (ԵՃՇՊՀ) նույնպես նախաձեռնում է մի շարք միջոցառումներ, որոնք ուղղված են շրջանավարտների զբաղվածության ապահովմանը: Բուհի ներսում գործում է կարիերայի կենտրոնը, որը փորձում է օգտակար լինել շրջանավարտներին շուկայում իրենց տեղը գտնելու գործում: Շրջանավարտների զբաղվածության խնդիրների շրջանակը բավականին ընդգրկուն և բարդ է: Այդ խնդիրների լուծումները շատ դեպքերում գտնվում են ոչ միայն կրթական, այլ նաև

տնտեսական և/կամ սոցիալական դաշտերում: Բացի այդ, ներկայիս տեղեկատվական բազաները թույլ չեն տալիս համակարգային մոնիտորինգ իրականացնել կրթական համակարգի և աշխատաշուկայի նկատմամբ, ձևավորել դրանց միջև կապը, կանխատեսել աշխատաշուկայի պահանջարկը հմտությունների և գիտելիքների կարիքների նկատմամբ:

Ներկայումս, անցումային երկրների բարձրագույն կրթական համակարգի բարեփոխումների իրականացման մեկ այլ կարևորագույն գործիք է համարվում ԵՄ ֆինանսավորմամբ իրականացվող Տեմպուս ծրագիրը: Տեմպուս ծրագրի նախագծերին մասնակցում է նաև մեր համալսարանը: ԵՃԾՊՀ-ը ներգրավված է երկրում իրականացվող 18 նոր Տեմպուս ծրագրերից՝ հինգում: Թույլ տվեք կանգ առնել այդ ծրագրերից երկուսի վրա՝ չնվազեցնելով մյուսների դերը:

Առաջինը՝ երեք տարի տևողությամբ (2013-2015թ.թ.) ***"Հայաստանում մարդկային կապիտալի գնահատման և շրջանավարտների զբաղվածունակությանն ուղղված բարձրագույն կրթության ցանց" (HEN-GEAR)*** ծրագիրն է, որտեղ որպես ծրագրի համակարգող մեծ դեր է տանում ԱլմաԼաուրեա Միջհամալսարանական Կոնսորցիումը, որի հետ արդյունավետ համագործակցում ենք: Ծրագիրը պետք է աջակցի հայաստանյան բուհերին բացահայտելու այն գործիքներն ու մեթոդաբանությունները, որոնք կօգնեն բարելավել կրթական համակարգի արդյունավետությունը: Այն իրականացվում է տեղական մակարդակում հայաստանյան շրջանավարտների տեղեկատվական բազայի ստեղծման միջոցով, որը, հիմք ընդունելով իտալական AlmaLaurea մոդելը, հետապնդում է երկու հիմնական նպատակ.

- համալսարաններին և կառավարությանը ապահովել արդյունավետ գործիքով, որը թույլ կտա մշտադիտարկում իրականացնել հասարակության համար բարձրագույն կրթության երկարատև ազդեցության նկատմամբ և համապատասխանաբար բարելավել կրթական առաջարկը,
- աջակցել կրթական համակարգի ու գործարար հատվածի միջև կապերի ստեղծմանը և աշխատանքի տեղավորման համակարգի ձևավորմանը:

Ծրագրում ներգրավված են 17 գործընկեր համալսարաններ և կազմակերպություններ, այդ թվում Հայաստանի 8 պետական համալսարաններ, ՀՀ կրթության և գիտության նախարարությունը, ՀՀ աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, Հայաստանի արտադրողների և ձեռներեցների (գործատուների) միությունը, Բարձրագույն կրթության որակի ապահովման ազգային կենտրոնը, Հայաստանի ուսանողների ազգային ասոցիացիան,, ՄԻՆՀՈ-ի համալսարանը (Բրահա, Պորտուգալիա), Հույելֆայի Համալսարանը (քաղաք Հույելֆա, Անդալուսիայի նահանգ, Հարավային Իսպանիա), Լաս Պալմաս դե Գրան Կանարիայի համալսարանը (Գրան Կանարիա կղզի, Իսպանիա):

Ծրագրի շրջանակներում տվյալների բազայի վրա հիմնված համակարգ է ստեղծվելու, որը թույլ կտա ձեռնարկություններին, աշխատանքի ընդունման համար, որոնել և գտնել այն

շրջանավարտներին, որոնք բավարարում են հմտությունների և գիտելիքների անհրաժեշտ մակարդակը, միևնույն ժամանակ հնարավորություն կտա շրջանավարտներին ունենալ համապարփակ և ժողովրդավարական մուտք դեպի աշխատաշուկա:

Նշված ծրագրի առաջին տարվա արդյունքները ամփոփվեցին և գնահատվեցին դրական 2013 թվականի դեկտեմբերի 2-ին Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարանում կայացած գործընկեր կողմերի համաժողովին, որտեղ նշվեց, որ այսօր արդեն մշակված է շրջանավարտների համար նախատեսված հարցաթերթը և ընթացքում է գտնվում այն պորտալի ձևավորումը, որը նախատեսված է լինելու շրջանավարտների վերաբերյալ էլեկտրոնային տեղեկատվության հավաքագրման համար:

Երկրորդ ծրագիրը, որը նույնպես կցանկանայի համառոտ ներկայացնել ձեր ուշադրությանը՝ դարձյալ Տեմպուսի երեք տարի տևողությամբ (2014-2016թ.թ.) ծրագիր է, որը կոչվում է՝"Ազգային և ոլորտային որակավորումների շրջանակների իրականացում Հայաստանում": Ծրագիրը մեկնարկեց սույն թվականի փետրվարի 3-ին Շվեդիայի Լինշոպինգ քաղաքում կայացած գործընկեր կողմերի հանդիպմամբ: Ծրագրում ներգրավված են ընդհանուր թվով 17 գործընկերներ. 8 պետական բուհեր և 4 կազմակերպություններ Հայաստանից, ինչպես նաև համալսարանական գործընկերներ Շվեդիայից, Գերմանիայից, Բելգիայից, Ռումինիայից և Նիդերլանդներից: Ծրագրի հիմնական նպատակն է՝ ամրապնդել Հայաստանի բարձրագույն կրթության հաստատությունների շրջանավարտների զբաղվածունակությունը և ապահովել Հայաստանի որակավորումների ճանաչումը ազգային և միջազգային աշխատանքի շուկաներում:

Եզրափակելով, կուզենայի նշել, որ գաղտնիք չէ, որ ցանկացած երկրի ապագան կախված է իր ապագա մասնագետների պատրաստվածության աստիճանից և որակական հատկանիշներից: Այդ իսկ պատճառով կրթական բարեփոխումները բոլոր երկրներում պետք է ունենան հաստատուն բնույթ, ինչը թույլ կտա երկրին զգալ իրեն որպես համաշխարհային հանրության լիիրավ անդամ: Այսպիսով, թույլ տվեք ավարտեմ իմ խոսքը խորին համոզմամբ, որ մեր համագործակցության հետագա խորացումը և ընդլայնումը կբերի բոլորիս կողմից սպասվող առաջընթաց՝ մեր երկրների ձեռներեցության և նորարարության զարգացման գործընթացում շրջանավարտների դերի բարձրացման առումով:

Շնորհակալություն ուշադրության համար: